# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԿԱԹՆԱՂԲՅՈՒՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Կաթնաղբյուր համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, գ.Կաթնաղբյուր, 077-843-043, katnaxbyur@mail.ru

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

20 ՄԱՐՏԻ 2017թվականի N 12-Ա

### ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2017 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ 20-Ի ԹԻՎ 3 ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

*Ղեկավարվելով "Տեղական ինքնակառավարման մասին" Հայաստանի Հանրապետության օրենքի 17-րդ հոդվածի պահանջներով* ***համայնքի ավագանին որոշում է՝***

Հաստատել Կաթնաղբյուր համայնքի ավագանու 2017թվականի մարտի 20-ի թիվ 3 արտահերթ նիստի հետևյալ օրակարգը

1. Կաթնաղբյուր համայնքի ավագանու 2016թվականի դեկտեմբերի 21-ի N 50- Ն որոշման մեջ փոփոխություն կատարելու և 2017թվականի փետրվարի 15-ի N 11- Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին
2. Համայնքի ղեկավարի հաղորդումը 2016թվականի բյուջեի տարեկան կատարողականի մասին

Կողմ -5 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԳԱԲՐԻԵԼՅԱՆ ԱՆԱՆԻԿ
2. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ ՀԱՅԿ
3. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ՊԱՐԳԵՎ
4. ՄԿՐՏՉՅԱՆ ԳԱՌԻԿ
5. ՄԿՐՏՉՅԱՆ ՆՎԵՐ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԲԱԶԻԿ ԱՍԱՏՐՅԱՆ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ
# ԿԱԹՆԱՂԲՅՈՒՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Կաթնաղբյուր համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, գ.Կաթնաղբյուր, 077-843-043, katnaxbyur@mail.ru

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

20 ՄԱՐՏԻ 2017թվականի N 13-Ն

### ԿԱԹՆԱՂԲՅՈՒՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2016ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 21-Ի N 50-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ԵՎ 2017ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 15-Ի N 11-Ն ՈՐՈՇՈՒՄՆ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

*Ղեկավարվելով <<Իրավական ակտերի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 70-րդ և 72-րդ հոդվածների պահանջներով. Համայնքի ավագանին **որոշում է***

1. Կաթնաղբյուր համայնքի ավագանու 2016 թվականի դեկտեմբերի 21-ի << Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Կաթնաղբյուր համայնքի վարչական տարածքում 2017թվականի տեղական տուրքերի և վճարների դրույքաչափերը սահմանելու մասին>> N 50-Ն որոշման հավելվածը շարադրել նոր խմբագրությամբ համաձայն հավելվածի:
2. Ուժը կորցրած ճանաչել Կաթնաղբյուր համայնքի ավագանու 2017թվականի փետրվարի 15-ի <<Կաթնաղբյուր համայնքի ավագանու 2016 թվականի դեկտեմբերի 21-ի N 52-Ա որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին>> N 11-Ն որոշումը:

Կողմ -5 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԳԱԲՐԻԵԼՅԱՆ ԱՆԱՆԻԿ
2. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ ՀԱՅԿ
3. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ՊԱՐԳԵՎ
4. ՄԿՐՏՉՅԱՆ ԳԱՐԻԿ
5. ՄԿՐՏՉՅԱՆ ՆՎԵՐ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ԲԱԶԻԿ ԱՍԱՏՐՅԱՆ

## ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԿԱԹՆԱՂԲՅՈՒՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ՍԱՀՄԱՆՎԱԾ ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐԻ ԵՎ ՎՃԱՐՆԵՐԻ 2017 ԹՎԱԿԱՆԻ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ

1. Հայաստանի Հանրապետության Կաթնաղբյուր համայնքի վարչական տարածքում սահմանվում են տեղական տուրքերի հետևյալ դրույքաչափերը.

1) Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով հաստատված ճարտարապետաշինարարական նախագծին համապատասխան՝ համայնքի վարչական տարածքում նոր շենքերի, շինությունների և ոչ հիմնական շինությունների շինարարության (տեղադրման) (բացառությամբ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված շինարարության թույլտվություն չպահանջող դեպքերի) թույլտվության համար.

ա. հիմնական շենքերի և շինությունների համար՝

մինչև 300 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող անհատական բնակելի, այդ թվում՝ այգեգործական (ամառանոցային) տների, ինչպես նաև մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հասարակական և արտադրական նշանակության շենքերի և շինությունների համար՝ տասնհինգ հազար դրամ,

բ. սույն կետի «ա» ենթակետով չնախատեսված շենքերի և շինությունների համար՝

բա)200-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝ երեսուն հազար դրամ,

բբ)500-ից մինչև 1000 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝ հիսուն հազար դրամ,

բգ)1000-ից մինչև 3000 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝ հիսուն հազար դրամ,

բդ)3000-ից և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝ հարյուր հազար դրամ.

գ. ոչ հիմնական շենքերի և շինությունների համար՝

գա) մինչև 20 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝ երեք հազար դրամ,

գբ)20 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝ հինգ հազար դրամ.

2) համայնքի վարչական տարածքում գոյություն ունեցող շենքերի և շինությունների վերակառուցման, վերականգնման, ուժեղացման, արդիականացման և բարեկարգման աշխատանքների (բացառությամբ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ

սահմանված շինարարության թույլտվություն չպահանջվող դեպքերի) թույլտվության համար, եթե սահմանված կարգով հաստատված ճարտարապետաշինարարական նախագծով՝

ա. չի նախատեսվում կցակառույցների, վերնակառույցների, շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների (այդ թվում՝ ստորգետնյա) հետևանքով օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացում կամ շենքերի գործառական նշանակության փոփոխություն՝ երեք հազար դրամ,

բ. բացի շենքերի և շինությունների վերակառուցման, ուժեղացման, վերականգնման կամ արդիականացման աշխատանքներից, նախատեսվում է նաև կցակառույցների, վերնակառույցների, շենքի տրամաչափային չափերն ընդլայնող այլ կառույցների (այդ թվում՝ ստորգետնյա) հետևանքով օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացում կամ շենքերի գործառական նշանակության փոփոխություն, և, բացի սույն կետի «ա» ենթակետով սահմանված դրույքաչափից, կիրառվում են նաև նոր շինարարության համար սույն հոդվածի 1-ին մասի 1-ին կետով սահմանված նորմերը և դրույքաչափերը՝ շենքերի և շինությունների ընդհանուր մակերեսի ավելացման կամ շենքերի գործառական նշանակության փոփոխության մասով,

գ. նախատեսվում է միայն կցակառույցների, վերնակառույցների, շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների (այդ թվում՝ ստորգետնյա) շինարարություն կամ շենքերի գործառական նշանակության փոփոխություն, ապա, սույն օրենքի իմաստով, այն համարվում է նոր շինարարություն, որի նկատմամբ կիրառվում են նոր շինարարության համար սույն հոդվածի 1-ին մասի 1-ին կետով սահմանված նորմերը և դրույքաչափերը.

3) համայնքի վարչական տարածքում շենքերի, շինությունների և քաղաքաշինական այլ օբյեկտների քանդման (բացառությամբ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված քանդման թույլտվություն չպահանջվող դեպքերի) թույլտվության համար՝ հինգ հազար դրամ.

4) համայնքի վարչական տարածքում հեղուկ վառելիքի, սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազերի վաճառքի թույլտվության համար՝ օրացուցային տարվա համար՝ երկու հարյուր հազար դրամ.

5) համայնքի վարչական տարածքում գտնվող խանութներում և կրպակներում հեղուկ վառելիքի, սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազերի, մանրածախ առևտրի կետերում կամ ավտոմեքենաների տեխնիկական սպասարկման և նորոգման ծառայության օբյեկտներում տեխնիկական հեղուկների վաճառքի թույլտվության համար՝ օրացուցային տարվա համար՝ վաթսուն հազար դրամ.

6) համայնքի վարչական տարածքում թանկարժեք մետաղներից պատրաստված իրերի որոշակի վայրում մանրածախ առք ու վաճառք իրականացնելու թույլտվության համար՝ օրացուցային տարվա համար՝ հիսուն հազար դրամ.

7) համայնքի վարչական տարածքում ոգելից և ալկոհոլային խմիչքների և (կամ) ծխախոտի արտադրանքի վաճառքի թույլտվության համար՝

ա. ոգելից և ալկոհոլային խմիչքի վաճառքի թույլտվության համար՝ յուրաքանչյուր եռամսյակի համար՝

ա)մինչև 26 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ չորս հազար դրամ,

աբ)26-ից մինչև 50 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ տասնմեկ հազար դրամ

ագ) 50-ից մինչև 100 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ տասնչորս հազար դրամ

ադ) 100-ից մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ քսան հազար հինգ հարյուր դրամ

աե)200-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ քսան հինգ հազար հինգ հարյուր դրամ,

ազ) 500 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ քառասունհինգ հազար հինգ հարյուր դրամ.

բ. ծխախոտի արտադրանքի վաճառքի թույլտվության համար՝ յուրաքանչյուր եռամսյակի համար՝

բա )մինչև 26 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ հինգ հազար դրամ,

բբ)26-ից մինչև 50 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ տասնմեկհազար դրամ

բգ)50-ից մինչև 100 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ տասնչորս հազար դրամ,

բդ)100-ից մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ քսան հազար հինգ հարյուր դրամ,

բե) 200-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ քսանհինգ հազար հինգ հարյուր դրամ

բզ)500 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ քառասուն հինգ հազար հինգ հարյուր դրամ

8) իրավաբանական անձանց և անհատ ձեռնարկատերերին համայնքի վարչական տարածքում «Առևտրի և ծառայությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված՝ բացօթյա առևտրի կազմակերպման թույլտվության համար՝ յուրաքանչյուր օրվա համար՝ երեք հարյուր հիսուն դրամ՝ մեկ քառակուսի մետրի համար.

9) համայնքի վարչական տարածքում առևտրի, հանրային սննդի, զվարճանքի, շահումով խաղերի և վիճակախաղերի կազմակերպման օբյեկտներին, խաղատներին և բաղնիքներին (սաունաներին) ժամը 24.00-ից հետո աշխատելու թույլտվության համար՝ օրացուցային տարվա համար՝

ա. առևտրի օբյեկտների համար՝ երեսուն մեկ հազար դրամ,

բ. հանրային սննդի և զվարճանքի օբյեկտների համար՝ քառասուն հինգ հազար դրամ,

գ. բաղնիքների (սաունաների) համար՝ երեք հարյուր հազար դրամ,

դ. խաղատների համար՝ վեց հարյուր հազար դրամ,

ե. շահումով խաղերի համար՝ երեք հարյուր  հազար դրամ,

զ. վիճակախաղերի համար՝ հարյուր քսան  հազար դրամ.

10) համայնքի վարչական տարածքում, համայնքային կանոններին համապատասխան, հանրային սննդի կազմակերպման և իրացման թույլտվության համար տեղական տուրքը յուրաքանչյուր եռամսյակի համար սահմանվում է՝

ա. հիմնական շինությունների ներսում՝

աա)մինչև 26 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ հինգ հազար  դրամ,

աբ)26-ից մինչև 50 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ տասը հազար դրամ,

ագ)50-ից մինչև 100 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ տասնմեկ հազար դրամ,

 ադ) 100-ից մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ տասնվեց  հազար դրամ,

 աե)200-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ քսան մեկ հազար դրամ,

ազ) 500 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ երեսուն հինգ հազար դրամ.

բ. ոչ հիմնական շինությունների ներսում՝

բա մինչև 26 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ հազար դրամ,

բբ) 26-ից մինչև 50 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ երկու հազար դրամ,

բգ )50-ից մինչև 100 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ երեք հազար դրամ,

բե) 100-ից մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ վեց հազար դրամ,

բզ) 200-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ տասներեք հազար դրամ,

բէ )500 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ քսան հազար դրամ.

11) քաղաքային բնակավայրերում ավագանու որոշմամբ սահմանված տնային կենդանիներ պահելու թույլտվության համար՝ օրացուցային տարվա համար՝ հինգ հազար դրամ.

12) ավագանու սահմանած կարգին ու պայմաններին համապատասխան՝ համայնքի վարչական տարածքում արտաքին գովազդ տեղադրելու թույլտվության համար, միջպետական ու հանրապետական նշանակության ավտոմոբիլային ճանապարհների օտարման շերտերում և պաշտպանական գոտիներում տեղադրվող գովազդների թույլտվությունների, յուրաքանչյուր ամիս մեկ քառակուսի մետրի համար՝

ա. ալկոհոլային սպիրտի պարունակությունը մինչև 20 ծավալային տոկոս արտադրանք գովազդող արտաքին գովազդի համար՝ երկու հազար դրամ,

բ. թունդ ալկոհոլային (սպիրտի պարունակությունը 20 և ավելի ծավալային տոկոս) արտադրանք գովազդող արտաքին գովազդի համար՝ երեք հազար հինգ հարյուր դրամ,

գ. սոցիալական գովազդի համար՝ զրո դրամ,

դ. այլ արտաքին գովազդի համար՝ հազար հինգ հարյուր դրամ,

ե. դատարկ գովազդային վահանակների համար՝ համայնքի վարչական տարածքում այլ արտաքին գովազդ տեղադրելու թույլտվության համար երեք հարյուր յոթանասուն հինգ դրամ,

զ. եթե արտաքին գովազդ տարածող գովազդակիրը տեղաբաշխել և տարածել է իր կազմակերպության գովազդը՝ համայնքի վարչական տարածքում այլ արտաքին գովազդ տեղադրելու թույլտվության համար հարյուր հիսուն դրամ.

13) Հայաստանի Հանրապետության համայնքների խորհրդանիշերը (զինանշան, անվանում և այլն), որպես օրենքով գրանցված ապրանքային նշան, ապրանքների արտադրության, աշխատանքների կատարման, ծառայությունների մատուցման գործընթացներում օգտագործելու թույլտվության համար՝ օրացուցային տարվա համար՝ հարյուր հազար դրամ.

14) համայնքի վարչական տարածքում մարդատար-տաքսու (բացառությամբ երթուղային տաքսիների՝ միկրոավտոբուսների) ծառայություն իրականացնելու թույլտվության համար՝ օրացուցային տարում յուրաքանչյուր մեքենայի համար՝ տասը հազար դրամ.

15) համայնքի վարչական տարածքում քաղաքացիական հոգեհանգստի (հրաժեշտի) ծիսակատարության ծառայությունների իրականացման և (կամ) մատուցման թույլտվության համար՝ օրացուցային տարվա համար՝ հինգ հարյուր հազար դրամ.

16) համայնքի վարչական տարածքում մասնավոր գերեզմանատան կազմակերպման և շահագործման թույլտվության համար՝ օրացուցային տարվա համար՝

ա. 3 հա-ից մինչև 5 հա մակերես ունեցող գերեզմանատների համար՝ երկու միլիոն հինգ հարյուր հազար դրամ,

բ. 5 հա-ից մինչև 7 հա մակերես ունեցող գերեզմանատների համար՝ հինգ միլիոն դրամ,

գ. 7 հա-ից մինչև 10 հա մակերես ունեցող գերեզմանատների համար՝ յոթ միլիոն դրամ,

դ. 10 հա-ից ավել մակերես ունեցող գերեզմանատների համար՝ տասը միլիոն դրամ:

2.Սույն հավելվածի 1-ին կետի 7-րդ ենթակետով սահմանված դրույքաչափերի համար կիրառել 0.5 գործակից:

# ԿԱԹՆԱՂԲՅՈՒՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ՏԵՂԱԿԱՆ ՎՃԱՐՆԵՐԻ 2017 ԹՎԱԿԱՆԻ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ

1. Հայաստանի Հանրապետության Կաթնաղբյուր համայնքի վարչական տարածքում սահմանվում են տեղական վճարների հետևյալ դրույքաչափերը.

1) համայնքի տարածքում շենքի կամ շինության արտաքին տեսքը փոփոխող վերակառուցման աշխատանքներ կատարելու հետ կապված տեխնիկատնտեսական պայմաններ մշակելու և հաստատելու համար՝ համայնքի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար երեք հազար դրամ

2) ճարտարապետաշինարարական նախագծային փաստաթղթերով նախատեսված շինարարության թույլտվություն պահանջող, բոլոր շինարարական աշխատանքներն իրականացնելուց հետո շենքերի և շինությունների (այդ թվում՝ դրանց վերակառուցումը, վերականգնումը, ուժեղացումը, արդիականացումը, ընդլայնումն ու բարեկարգումը) կառուցման ավարտը ավարտական ակտով փաստագրման ձևակերպման համար՝ համայնքի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար երեք հազար դրամ

3) ճարտարապետաշինարարական նախագծային փաստաթղթերով նախատեսված աշխատանքներն ավարտելուց հետո շահագործման թույլտվության ձևակերպման համար՝ համայնքի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար հազար դրամ

4) համայնքի տնօրինության և օգտագործման ներքո գտնվող հողերը հատկացնելու, հետ վերցնելու և վարձակալության տրամադրելու դեպքերում փաստաթղթերի (փաթեթի) նախապատրաստման համար՝ համայնքի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար հազար դրամ

5) համայնքի կողմից կազմակերպվող մրցույթների և աճուրդների մասնակցության համար՝ համայնքի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար երեք հազար դրամ

6) համայնքի վարչական տարածքում տոնավաճառներին (վերնիսաժներին) մասնակցելու համար՝ համայնքի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար հազար դրամ

7) համայնքի կողմից աղբահանության վճար վճարողների համար աղբահանության աշխատանքները կազմակերպելու համար աղբահանության վճարը դրույքաչափերի սահմաններում զրո դրամ

8) համայնքի կողմից իրավաբանական անձանց կամ անհատ ձեռնարկատերերին շինարարական և խոշոր եզրաչափի աղբի հավաքման և փոխադրման, ինչպես նաև աղբահանության վճար վճարողներին շինարարական և խոշոր եզրաչափի աղբի ինքնուրույն հավաքման և փոխադրման թույլտվության համար աղբահանության վճարը դրույքաչափերի սահմաններում սահմանվում է զրո դրամ:

9) կենտրոնացված ջեռուցման համար՝ համայնքի կողմից կամ համայնքի պատվերով մատուցված ծառայությունների դիմաց փոխհատուցման գումարի չափով, բացառությամբ «Հանրային ծառայությունները կարգավորող մարմնի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի համաձայն սահմանված հանրային ծառայությունների կարգավորվող ոլորտներում սակագների սահմանման դեպքերի.

10) ջրմուղ-կոյուղու համար այն համայնքներում, որոնք ներառված չեն ջրմուղ-կոյուղու ծառայություններ մատուցող օպերատոր կազմակերպությունների սպասարկման տարածքներում, մասնավորապես ջրամատակարարման և ջրահեռացման վճարներ՝ համայնքի կողմից կամ համայնքի պատվերով մատուցված ծառայությունների դիմաց փոխհատուցման գումարի չափով, բացառությամբ «Հանրային ծառայությունները կարգավորող մարմնի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի

համաձայն սահմանված հանրային ծառայությունների կարգավորվող ոլորտներում սակագների սահմանման դեպքերի.

11) ոռոգման ջրի մատակարարման համար այն համայնքներում, որոնք ներառված չեն «Ջրօգտագործողների ընկերությունների և ջրօգտագործողների ընկերությունների միությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի համաձայն ստեղծված ջրօգտագործողների ընկերությունների սպասարկման տարածքներում՝ համայնքի կողմից կամ համայնքի պատվերով մատուցված ծառայությունների դիմաց փոխհատուցման գումարի չափով, բացառությամբ «Հանրային ծառայությունները կարգավորող մարմնի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի համաձայն սահմանված հանրային ծառայությունների կարգավորվող ոլորտներում սակագների սահմանման դեպքերի.

12) համայնքի կողմից կառավարվող բազմաբնակարան շենքերի ընդհանուր բաժնային սեփականության պահպանման պարտադիր նորմերի կատարման համար՝ համայնքի կողմից կամ համայնքի պատվերով մատուցված ծառայությունների դիմաց փոխհատուցման գումարի չափով.

13) համայնքային ենթակայության մանկապարտեզի ծառայությունից օգտվողների համար՝ համայնքի կողմից կամ համայնքի պատվերով մատուցված ծառայությունների դիմաց փոխհատուցման գումարի չափով.

14) համայնքային ենթակայության արտադպրոցական դաստիարակության հաստատությունների (երաժշտական, նկարչական և արվեստի դպրոցներ և այլն) ծառայություններից օգտվողների համար՝ համայնքի կողմից կամ համայնքի պատվերով մատուցված ծառայությունների դիմաց փոխհատուցման գումար զրո դրամ.

15) համայնքի վարչական տարածքում, սակայն համայնքի բնակավայրերից դուրս գտնվող՝ ավագանու որոշմամբ հանրային հանգստի վայր սահմանված և համայնքի կողմից կամ համայնքի պատվերով որպես հանրային հանգստի վայր կահավորված տարածքում ընտանեկան կամ գործնական միջոցառումներ անցկացնելու համար՝ համայնքի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար.

16) համայնքային սեփականություն հանդիսացող պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների և համայնքային ենթակայության թանգարանների մուտքի համար՝ համայնքի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման գումար զրո դրամ.

17) համայնքային սեփականություն հանդիսացող ընդհանուր օգտագործման փողոցներում և հրապարակներում (բացառությամբ բակային տարածքների, ուսումնական, կրթական, մշակութային և առողջապահական հաստատությունների, պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինների վարչական շենքերի հարակից տարածքների) ավտոտրանսպորտային միջոցն ավտոկայանատեղում կայանելու համար «Ավտոտրանսպորտային միջոցների կայանատեղերի տեղական վճարի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված դրույքաչափերի սահմաններում սահմանել զրո դրամ.

18) Համայնքի արխիվից փաստաթղթերի պատճեններ տրամադրելու համար՝ մեկ փաստաթղթի համար՝ հազար դրամ:

Կաթնաղբյուր համայնքի ղեկավար Բ.Ասատրյան

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԿԱԹՆԱՂԲՅՈՒՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Կաթնաղբյուր համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, գ.Կաթնաղբյուր, 077-843-043, katnaxbyur@mail.ru

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

20 ՄԱՐՏԻ 2017թվականի N 14-Ն

## ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՀԱՂՈՐԴՈՒՄԸ 2016 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ՏԱՐԵԿԱՆ ԿԱՏԱՐՈՂԱԿԱՆԻ ՄԱՍԻՆ

*Ղեկավարվելով << Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետի պահանջներով* ***համայնքի ավագանին որոշում է***

Հաստատել համայնքի ղեկավարի հաշվետվությունը 2016 թվականի բյուջեի տարեկան կատարողականի վերաբերյալ համաձայն հավելվածի:

Կողմ -5 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԳԱԲՐԻԵԼՅԱՆ ԱՆԱՆԻԿ
2. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ ՀԱՅԿ
3. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ՊԱՐԳԵՎ
4. ՄԿՐՏՉՅԱՆ ԳԱՐԻԿ
5. ՄԿՐՏՉՅԱՆ ՆՎԵՐ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ԲԱԶԻԿ ԱՍԱՏՐՅԱՆ

Հավելված
ՀՀ Կոտայքի մարզի Կաթնաղբյուր
համայնքի ավագանու 2017 թվականի
Մարտի 19 -ի
N 14- Ն որոշման

Հաշվետվություն

ՀԱՄԱՅՆՔԻ ԲՅՈՒՋԵԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ
/ 11.01.2016թ.-30.12. 2016թ. ժամանակահատվածի համար/

1. Համայնքի անվանումը Կաթնաղբյուր համայնք
2. Փոստային հասցեն գ. Կաթնաղբյուր
3. Համայնքի տեղաբախշման մարզը և համայնքի կոդը բյուջետային ծախսեր տարածքային դասակարգման _________________
4. Համայնքին սպասարկող գանձապետական ստորաբաժանման անվանումը --- Աբովյան
5. Համայնքի Գանձապետական ստորաբաժանումում հաշվեհամարը
6. Ծախսերի ֆինանսավորման աղբյուրի կոդը
7. Չափի միավորը հազար դրամ

«20 »« Մարտի »2017 թ.

Կ.Տ.

Համայնքի ղեկավար՝ Ք.Ասատրյան

| Տողի NN | Եկամտատեսակները | Հոդվածի NN | Ընդամենը (ս.5+ս.6) | այդ թվում՝ | | Ընդամենը | այդ թվում | | Ընդամենը | այդ թվում | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | վարչական մաս | ֆոնդային մաս | | վարչական մաս | ֆոնդային մաս | | վարչական մաս | ֆոնդային մաս |
| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 | 7 | 8 | 9 | 10 | 11 | 12 |
| 1000 | ԸՆԴԱՄԵՆԸ ԵԿԱՄՈՒՏՆԵՐ, այդ թվում՝ | | 16887,4 | 16887,4 | | 16887,4 | 16887,4 | | 16527,03 | 16527,03 | |
| 1100 | 1. ՀԱՐԿԵՐ ԵՎ ՏՈՒՐՔԵՐ, այդ թվում՝ | 7100 | 3006,7 | 3006,7 | | 3006,7 | 3006,7 | | 2749,97 | 2749,97 | |
| 1110 | 1.1 Գույքային հարկեր անշարժ գույքից, այդ թվում՝ | 7131 | 1683,0 | 1683,0 | | 1683,0 | 1683,0 | | 1510,57 | 1510,57 | |
| 1111 | Գույքահարկ համայնքների վարչական տարածքներում գտնվող շենքերի և | | 413,0 | 413,0 | | 413,0 | 413,0 | | 360,31 | 360,31 | |
| 1112 | Հողի հարկ համայնքների վարչական տարածքներում | | 1270,0 | 1270,0 | | 1270,0 | 1270,0 | | 1150,26 | 1150,26 | |
| 1120 | 1.2 Գույքային հարկեր այլ գույքից, այդ թվում՝ | 7136 | 1231,7 | 1231,7 | | 1231,7 | 1231,7 | | 1129,2 | 1129,2 | |
| 1121 | Գույքահարկ փոխադրամիջոցների համար | | 1231,7 | 1231,7 | | 1231,7 | 1231,7 | | 1129,2 | 1129,2 | |
| 1130 | 1.3 Ապրանքների օգտագործման կամ գործունեության իրականացման թույլտվության վճարներ, այդ | 7145 | 92,0 | 92,0 | | 92,0 | 92,0 | | 110,2 | 110,2 | |
| 1131 | Տեղական տուրքեր, այդ թվում՝ | 71452 | 92,0 | 92,0 | | 92,0 | 92,0 | | 110,2 | 110,2 | |
| 1132 | ա) Համայնքի տարածքում նոր շենքերի, շինությունների (ներառյալ ոչ հիմնական) | | | | | | | | | | |
| 1133 | աա) Հիմնական շինությունների | | | | | | | | 15,0 | 15,0 | |
| 1134 | աբ)Ոչ հիմնական | | | | | | | | | | |
| 1135 | բ) Համայնքի վարչական տարածքում շենքերի, | | | | | | | | | | |
| 1136 | գ) Համայնքի վարչական տարածքում շենքերի, շինությունների, քաղաքաշինական այդ | | | | | | | | | | |
| 1137 | դ) Համայնքի տարածքում ոգելից խմիչքների և (կամ) ծխախոտի արտադրանքի վաճառքի, հան հանրային սննդի օբյեկտներում՝ ոգելից խմիչքների և (կամ) ծխախոտի արտադրանքի | | 72,0 | 72,0 | | 72,0 | 72,0 | | 75,2 | 75,2 | |

| Տողի NN | Եկամտատեսակները | Հոդվածի NN | Ընդամենը (ս.5+ս.6) | այդ թվում՝ | | Ընդամենը | այդ թվում | | Ընդամենը | այդ թվում | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | վարչական մաս | ֆոնդային մաս | | վարչական մաս | ֆոնդային մաս | | վարչական մաս | ֆոնդային մաս |
| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 | 7 | 8 | 9 | 10 | 11 | 12 |
| 1148 | Հանրային սնունդ | | 20,0 | 20,0 | | | | | | | |
| 1200 | 2. ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԴՐԱՄԱՇՆՈՐՀՆԵՐ, այդ թվում՝ | 7300 | 13157,7 | 13157,7 | | 13157,7 | 13157,7 | | 13157,7 | 13157,7 | |
| 1210 | 2.1 Ընթացիկ արտաքին պաշտոնական | 7311 | | | | | | | | | |
| 1250 | 2.5 Ընթացիկ ներքին պաշտոնական | 7331 | 13157,7 | 13157,7 | | 13157,7 | 13157,7 | | 13157,7 | 13157,7 | |
| 1251 | ա) Պետական բյուջեից ֆինանսական համահարթեցման | | 13157,7 | 13157,7 | | 13157,7 | 13157,7 | | 13157,7 | 13157,7 | |
| 1256 | բբ) այլ դոտացիաներ | | | | | | | | | | |
| 1262 | բ) ՀՀ այլ համայնքներից կապիտալ ծախսերի | | | | | | | | | | |
| 1300 | 3. ԱՅԼ ԵԿԱՄՈՒՏՆԵՐ, այդ | 7400 | 723,0 | 723,0 | | 723,0 | 723,0 | | 619,36 | 619,36 | |
| 1310 | 3.1 Տոկոսներ, այդ թվում՝ | 7411 | | | | | | | | | |
| 1311 | Բանկերում համայնքի բյուջեի ժամանակավոր ազատ միջոցների տեղաբաշխումից և դեպոզիտներից ստացված | | | | | | | | | | |
| 1320 | 3.2 Շահաբաժիններ, այդ թվում՝ | 7412 | | | | | | | | | |
| 1321 | | | | | | | | | | | |
| 1330 | 3.3 Գույքի վարձակալությունից եկամուտներ, այդ թվում՝ | 7415 | 533,0 | 533,0 | | 533,0 | 533,0 | | 535,79 | 535,79 | |
| 1331 | Համայնքի սեփականություն համարվող հողերի վարձակալության | | 533,0 | 533,0 | | 533,0 | 533,0 | | 535,79 | 535,79 | |
| 1340 | 3.4 Համայնքի բյուջեի եկամուտներ ապրանքների մատակարարումից և ծառայությունների | 7421 | | | | | | | | | |
| 1342 | Պետության կողմից տեղական ինքնակառավարման մարմիններին պատվիրակված լիազորությունների | | | | | | | | | | |
| 1350 | 3.5 Վարչական գանձումներ, այդ թվում՝ | 7422 | 190,0 | 190,0 | | 190,0 | 190,0 | | | 39 | |
| 1351 | Տեղական վճարներ | | 20,0 | 20,0 | | 20,0 | 20,0 | | | 39 | |
| 1352 | Ինքնակամ կառույցներ շենք շինություններից | | 170,0 | 170,0 | | 170,0 | 170,0 | | | | |
| 1360 | 3.6 Մուտքեր տույժերից, տուգանքներից, այդ թվում՝ | 7431 | | | | | | | | | |
| 1361 | Վարչական | | | | | | | | | | |
| 1370 | 3.7 Ընթացիկ ոչ պաշտոնական դրամաշնորհներ, այդ թվում՝ | 7441 | | | | | | | | | |
| 1390 | 3.9 Այլ եկամուտներ, այդ թվում՝ | 7451 | | | | | | | | 44,56 | |

Հաշվետվություն

## ՀԱՄԱՅՆՔԻ ԲՅՈՒՋԵԻ ԾԱԽՍԵՐԸ՝ ԸՍՏ ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ԾԱԽՍԵՐԻ ԳՈՐԾԱՌԱԿԱՆ ԴԱՍԱԿԱՐԳՄԱՆ

| Տողի NN | Բաժին | Խումբ | Դաս | Բյուջետային ծախսերի գործառական դասակարգման բաժինների, խմբերի և դասերի անվանումները | Տարեկան հաստատված պլան | | | Տարեկան ճշտված պլան | | | Փաստացի | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | | Ընդամենը (ս.7+ս.8) | այդ թվում՝ վարչական բյուջե | այդ թվում՝ ֆոնդային բյուջե | Ընդամենը | այդ թվում՝ վարչական բյուջե | այդ թվում՝ ֆոնդային բյուջե | Ընդամենը | այդ թվում՝ վարչական բյուջե | այդ թվում՝ ֆոնդային բյուջե |
| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 | 7 | 8 | 9 | 10 | 11 | 12 | 13 | 14 |
| 2000 | X | X | X | ԸՆԴԱՄԵՆԸ ԾԱԽՍԵՐ (տող2100+տող2200+տող23 | 24865,3 | 16887,4 | 7977,9 | 24865,3 | 16887,4 | 7977,9 | 20317,13 | 16330,78 | 3986,35 |
| 2100 | 01 | 0 | 0 | ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒՅԹԻ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ, այդ թվում՝ | 14432,4 | 13932,4 | 500,0 | 15472,90 | 145129,0 | 960,0 | 15248,8 | 14291,0 | 957,8 |
| 2110 | 01 | 1 | 0 | *Օրենսդիր և գործադիր մարմիններ, պետական կառավարում, ֆինանսական և հարկաբյուջետային* | 14262,4 | 13762,4 | 500,0 | 151197,9 | 14237,9 | 960,0 | 15018,8 | 14061,0 | 957,8 |
| 2111 | 01 | 1 | 1 | Օրենսդիր և գործադիր մարմիններ, պետական կառավարում | 14262,4 | 13762,4 | 500,0 | 15197,9 | 14237,9 | 960,0 | 15018,8 | 14061,0 | 957,8 |
| 2133 | 01 | 3 | 3 | Ընդհանուր բնույթի այլ ծառայություններ | | | | | | | | | |
| 2160 | 01 | 6 | 0 | *Ընդհանուր բնույթի հանրային ծառայություններ (այլ դասերին չպատկանող)* | 170,0 | 170,0 | | 275,0 | 275,0 | | 230,0 | 230,0 | |
| 2161 | 01 | 6 | 1 | Ընդհանուր բնույթի հանրային ծառայություններ (այլ դասերին չպատկանող) | 170,0 | 170,0 | | 275,0 | 275,0 | | 230,0 | 230,0 | |
| 2170 | 01 | 7 | 0 | *Պետական պարտքի գծով գործառնություններ, որից՝* | | | | | | | | | |
| 2200 | 02 | 0 | 0 | ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ, այդ թվում՝ | 75,0 | 75,0 | | | | | | | |
| 2220 | 02 | 2 | 0 | *Քաղաքացիական պաշտպանություն, որից՝* | | | | | | | | | |
| 2221 | 02 | 2 | 1 | Քաղաքացիական պաշտպանություն | | | | | | | | | |
| 2250 | 02 | 5 | 0 | Պաշտպանություն (այլ դասերին չպատկանող) որից՝ | 75,0 | 75,0 | | | | | | | |
| 2251 | 02 | 5 | 1 | Պաշտպանություն (այլ դասերին չպատկանող) | 75,0 | 75,0 | | | | | | | |
| 2300 | 03 | 0 | 0 | ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱՐԳ, ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅՈՒՆ և ԴԱՏԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ, այդ թվում | 75,0 | 75,0 | | | | | | | |
| 2320 | 03 | 2 | 0 | Փրկարար ծառայություն, որից | 75,0 | 75,0 | | | | | | | |
| 2321 | 03 | 2 | 1 | Փրկարար ծառայություն | 75,0 | 75,0 | | | | | | | |
| 2332 | 03 | 3 | 2 | Իրավական | | | | | | | | | |
| 2400 | 04 | 0 | 0 | ՏՆՏԵՍԱԿԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ, այդ թվում՝ | 1250,0 | 1250,0 | 1000,0 | 3550,0 | 200,0 | 3350,0 | 1929,55 | 180,0 | 1749,55 |
| 2420 | 04 | 2 | 0 | *Գյուղատնտեսություն, անտառային տնտեսություն, ձկնորսություն և որսորդություն, որից՝* | 750,0 | 750,0 | 500,0 | 2400,0 | 200,0 | 2200,0 | 1533,46 | 180,0 | 1353,46 |
| 2421 | 04 | 2 | 1 | Գյուղատնտեսություն | 250,0 | 250,0 | | 200 | 200 | | 180,0 | 180,0 | |
| 2424 | 04 | 2 | 4 | Ոռոգում | 500,0 | | 500,0 | 2200,0 | | 2200,0 | 1353,46 | | 1353,46 |
| 2430 | 04 | 3 | 0 | Վառելիք և էներգետիկա, | | | | | | | | | |
| 2450 | 04 | 5 | 0 | *Տրանսպորտ, որից՝* | 500,0 | | 500,0 | 1150,0 | | 1150,0 | 1143,18 | | 1143,18 |
| 2451 | 04 | 5 | 1 | *Ճանապարհային տրանսպորտ* | 500,0 | | 500,0 | 1150,0 | | 1150,0 | 1143,18 | | 1143,18 |

| Տողի NN | Բաժին | Խումբ | Դաս | Բյուջետային ծախսերի գործառական դասակարգման բաժինների, խմբերի և դասերի անվանումները | Ընդամենը (ս.7 +ս.8) | այդ թվում՝ | | Ընդամենը | այդ թվում՝ | | Ընդամենը | այդ թվում՝ | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | | | վարչական բյուջե | ֆոնդային բյուջե | | վարչական բյուջե | ֆոնդային բյուջե | | վարչական բյուջե | ֆոնդային բյուջե |
| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 | 7 | 8 | 9 | 10 | 11 | 12 | 13 | 14 |
| 2490 | 04 | 9 | 0 | *Տնտեսական հարաբերություններ (այլ դասերին չպատկանող), որից՝* | | | | | | | -747,09 | | -747,09 |
| 2491 | 04 | 9 | 1 | Տնտեսական հարաբերություններ (այլ դասերին չպատկանող) | | | | | | | -747,09 | | -747,09 |
| 2500 | 05 | 0 | 0 | ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ, այդ թվում՝ | 530,0 | 280,0 | 250,0 | 724,5 | 474,5 | 250,0 | 504,28 | 409,28 | 95,0 |
| 2510 | 05 | 1 | 0 | *Աղբահանում, որից՝* | 250,0 | 250,0 | | 444,5 | 444,5 | | 379,28 | 379,28 | |
| 2511 | 05 | 1 | 1 | Աղբահանում | 250,0 | 250,0 | | 444,5 | 444,5 | | 379,28 | 379,28 | |
| 2520 | 05 | 2 | 0 | *Կեղտաջրերի հեռացում, որից՝* | 250,0 | | 250,0 | 25,0 | 25,0 | | 95,0 | | 95,0 |
| 2521 | 05 | 2 | 1 | Կեղտաջրերի հեռացում | 250,0 | | 250,0 | 25,0 | 25,0 | | 95,0 | | 95,0 |
| 2530 | 05 | 3 | 0 | *Շրջակա միջավայրի աղտոտման դեմ պայքար* | 30,0 | 30,0 | | 30 | 30 | | 30 | 30 | |
| 2531 | 05 | 3 | 1 | Շրջակա միջավայրի աղտոտման դեմ պայքար | 30,0 | 30,0 | | 30 | 30 | | 30 | 30 | |
| 2600 | 06 | 0 | 0 | ԲՆԱԿԱՐԱՆԱՅԻՆ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ ԵՎ | 850,0 | 600,0 | 250,0 | 3695,0 | 955,0 | 2470,0 | 1989,5 | 805,5 | 1184,0 |
| 2621 | 06 | 2 | 1 | Համայնքային զարգացում | | | | | | | | | |
| 2631 | 06 | 3 | 1 | Ջրամատակարարում | | | | 40 | 40 | | 32,5 | 32,5 | |
| 2640 | 06 | 4 | 0 | *Փողոցների լուսավորում* | 850,0 | 600,0 | 250,0 | 3655,0 | 915,0 | 2740,0 | 1957,0 | 773,0 | 1184,0 |
| 2641 | 06 | 4 | 1 | Փողոցների լուսավորում | 850,0 | 600,0 | 250,0 | 3655,0 | 915,0 | 2740,0 | 1957,0 | 773,0 | 1184,0 |
| 2760 | 07 | 6 | 0 | *Առողջապահություն (այլ* | | | | | | | | | |
| 2762 | 7 | 6 | 2 | առողջապահության այլ | | | | | | | | | |
| 2800 | 08 | 0 | 0 | ՀԱՆԳԻՍՏ, ՄՇԱԿՈՒՅԹ ԵՎ ԿՐՈՆ, այդ թվում՝ | 6407,86 | 430,0 | 5977,86 | 527,89 | 250,0 | 277,86 | 150,0 | 150,0 | |
| 2811 | 08 | 1 | 1 | Հանգստի և սպորտի ծառայություններ | 200,0 | 200,0 | | | | | | | |
| 2820 | 08 | 2 | 0 | *Մշակութային ծառայություններ, որից՝* | 6177,86 | 200,0 | 5977,86 | 527,86 | 250,0 | 277,86 | 150,0 | 150,0 | |
| 2824 | 08 | 2 | 4 | Այլ մշակութային կազմակերպություններ | 200,0 | 200,0 | | 250 | 250 | | 150 | 150 | |
| 2841 | 08 | 4 | 0 | Կրոնական և հասարակական այլ | 30,0 | 30,0 | | | | | | | |
| 2842 | 08 | 4 | 2 | քաղաքական կուսակցություններ | 30,0 | 30,0 | | | | | | | |
| 2827 | 08 | 2 | 7 | Հուշարձանների և մշակութային արժեքների | 5977,86 | | 5977,86 | | 277,86 | | 277,86 | | |
| 2921 | 09 | 2 | 1 | Հիմնական ընդհանուր կրթություն | | | | 400 | | 400 | | | |
| 3000 | 10 | 0 | 0 | ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ, այդ թվում՝ | 320,0 | 320,0 | | 495,0 | 495,0 | | 495,0 | 495,0 | |
| 3051 | 10 | 5 | 1 | Գործազրկություն | | | | | | | | | |
| 3061 | 10 | 6 | 1 | Բնակարանային ապահովում | | | | | | | | | |
| 3070 | 10 | 7 | 0 | *Սոցիալական հատուկ արտոնություններ (այլ դասերին չպատկանող), որից՝* | 320,0 | 320,0 | | 495,0 | 495,0 | | 495,0 | 495,0 | |
| 3071 | 10 | 7 | 1 | Սոցիալական հատուկ արտոնություններ (այլ | 320,0 | 320,0 | | 495,0 | 495,0 | | 495,0 | 495,0 | |
| 3100 | 11 | 0 | 0 | ՀԻՄՆԱԿԱՆ ԲԱԺԻՆՆԵՐԻՆ ՉԴԱՍՎՈՂ ՊԱՀՈՒՍՏԱՅԻՆ ՖՈՆԴԵՐ | 925,0 | 925,0 | | | | | | | |
| 3110 | 11 | 1 | 0 | *ՀՀ կառավարության և համայնքների պահուստային ֆոնդ, որից՝* | 925,0 | 925,0 | | | | | | | |
| 3112 | 11 | 1 | 2 | ՀՀ համայնքների պահուստային ֆոնդ | 925,0 | 925,0 | | | | | | | |
| | | | | համայնքի բյուջեի վարչական մասի պահուստային ֆոնդից ֆոնդային մասկատարվող հատկացումներ | | | | | | | | | |

ՀԱՄԱՅՆՔԻ ԲՅՈՒՋԵԻ ԾԱԽՍԵՐԸ՝ ԸՍՏ ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ԾԱԽՍԵՐԻ ՏՆՏԵՍԱԳԻՏԱԿԱՆ ԴԱՍԱԿԱՐԳՄԱՆ

| Տողի NN | Բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման հոդվածների անվանումները | NN | Տարեկան հաստատված պլան Ընդամենը (ս.5+ս.6) | այդ թվում՝ վարչական մաս | այդ թվում՝ ֆոնդային մաս | Տարեկան ճշտված պլան Ընդամենը | այդ թվում՝ վարչական մաս | այդ թվում՝ ֆոնդային մաս | Փաստացի Ընդամենը | այդ թվում՝ վարչական մաս | այդ թվում՝ ֆոնդային մաս |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 | | 8 | 9 | 10 | 11 | 12 |
| 4000 | ԸՆԴԱՄԵՆԸ ԾԱԽՍԵՐ, այդ | | 24865,3 | 16887,4 | 7977,9 | 24865,2 | 16887,4 | 7977,4 | 20317,13 | 16330,78 | 3986,35 |
| 4050 | Ա. ԸՆԹԱՑԻԿ ԾԱԽՍԵՐ, այդ թվում՝ | x | 16887,4 | 16887,4 | | 16887,4 | 16887,4 | | 16330,78 | 16330,78 | |
| 4100 | 1.1 ԱՇԽԱՏԱՆՔԻ ՎԱՐՁԱՏՐՈՒԹՅՈՒՆ, այդ | x | 11188,3 | 11188,3 | | 11615,3 | 11615,3 | | 11615,3 | 11615,3 | |
| 4110 | ԴՐԱՄՈՎ ՎՃԱՐՎՈՂ ԱՇԽԱՏԱՎԱՐՁԵՐ ԵՎ ՀԱՎԵԼԱՎՃԱՐՆԵՐ, որից՝ | x | 11188,3 | 11188,3 | | 11615,3 | 11615,3 | | 11615,3 | 11615,3 | |
| 4111 | -Աշխատողների աշխատավարձեր և հավելավճարներ | 4111 | 11188,3 | 11188,3 | | 11615,3 | 11615,3 | | 11615,3 | 11615,3 | |
| 4112 | - Պարգևատրումներ, դրամական խրախուսումներ և հատուկ վճարներ | 4112 | | | | | | | | | |
| 4114 | -Այլ վարձատրություններ | 4115 | | | | | | | | | |
| 4121 | -Բնեղեն աշխատավարձեր և հավելավճարներ | 4121 | | | | | | | | | |
| 4130 | *ՓԱՍՏԱՑԻ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԱՊԱՀՈՎՈՒԹՅԱՆ ՎՃԱՐՆԵՐ, որից՝* | x | | | | | | | | | |
| 4131 | *-Սոցիալական ապահովության վճարներ* | 4131 | | | | | | | | | |
| 4200 | 1.2 ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ԱՊՐԱՆՔՆԵՐԻ ՁԵՌՔ ԲԵՐՈՒՄ, այդ թվում՝ | x | 4333,0 | 4333,0 | | 4636,0 | 4636,0 | | 4124,38 | 4124,38 | |
| 4210 | *ՇԱՐՈՒՆԱԿԱԿԱՆ ԾԱԽՍԵՐ, որից՝* | x | 1812,0 | 1812,0 | | 1772,0 | 1772,0 | | 1456,68 | 1456,68 | |
| 4211 | -Գործառնական և բանկային ծառայությունների ծախսեր | 4211 | 20,0 | 20,0 | | 20,0 | 20,0 | | | | |
| 4212 | -Էներգետիկ | 4212 | 900,0 | 900,0 | | 800,0 | 800,0 | | 658,0 | 658,0 | |
| 4213 | -Կոմունալ ծառայություններ | 4213 | 250,0 | 250,0 | | 444,5 | 444,5 | | 379,28 | 379,28 | |
| 4214 | -Կապի ծառայություններ | 4214 | 600,0 | 600,0 | | 465,5 | 465,5 | | 419,6 | 419,6 | |
| 4215 | -Ապահովագրական ծախսեր | 4215 | 42,0 | 42,0 | | | | | | | |
| 4220 | *ԳՈՐԾՈՒՂՈՒՄՆԵՐԻ ԵՎ ՇՐՋԱԳԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ* | x | | | | | | | | | |
| 4221 | -Ներքին գործուղումներ | 4221 | | | | | | | | | |
| 4230 | *ՊԱՅՄԱՆԱԳՐԱՅԻՆ ԱՅԼ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՁԵՌՔ ԲԵՐՈՒՄ, որից՝* | x | 1195,0 | 1195,0 | | 1175,0 | 1175,0 | | 1067,5 | 1067,5 | |
| 4231 | -Վարչական | 4231 | | | | | | | | | |
| 4232 | -Համակարգչային ծառայություններ | 4232 | 15,0 | 15,0 | | 15 | 15 | | 15 | 15 | |
| 4233 | -Աշխատակազմի մասնագիտական | 4233 | | | | | | | | | |
| 4234 | -Տեղակատվական ծառայություններ | 4234 | 130,0 | 130,0 | | 130,0 | 130,0 | | 130 | 130 | |
| 4235 | -Կառավարչական ծառայություններ | 4235 | 500,0 | 500,0 | | 740,0 | 740,0 | | 740 | 740 | |
| 4238 | -Ընդհանուր բնույթի այլ ծառայություններ | 4239 | 550,0 | 550,0 | | 290,0 | 290,0 | | 182,5 | 182,5 | |
| 4240 | *ԱՅԼ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ* | x | 370,0 | 370,0 | | 395,0 | 395,0 | | 365,0 | 365,0 | |
| 4241 | -Մասնագիտական ծառայություններ | 4241 | 370,0 | 370,0 | | 395,0 | 395,0 | | 365,0 | 365,0 | |

| Տողի NN | Բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման հոդվածների անվանումները | NN | Ընդամենը (ս.5+ս.6) | այդ թվում՝ վարչական մաս | այդ թվում՝ ֆոնդային մաս | Ընդամենը | այդ թվում՝ վարչական մաս | այդ թվում՝ ֆոնդային մաս | Ընդամենը | այդ թվում՝ վարչական մաս | այդ թվում՝ ֆոնդային մաս |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 | | 8 | 9 | 10 | 11 | 12 |
| 4250 | Ընթացիկ նորոգում և որից ծառայություններ և նյութեր | x | 60,0 | 60,0 | | | | | | | |
| 4252 | Մեքենաների և սարքավորումների ընթացիկ | 4252 | 60,0 | 60,0 | | | | | | | |
| 4260 | *ՆՅՈՒԹԵՐ, որից* | x | 896,0 | 896,0 | | 1294,0 | 1294,0 | | 1235,0 | 1235,0 | |
| 4261 | -Գրասենյակային նյութեր և հագուստ | 4261 | 180,0 | 180,0 | | 238,0 | 238,0 | | 230,2 | 230,2 | |
| 4264 | -Տրանսպորտային նյութեր | 4264 | 516,0 | 516,0 | | 546,0 | 546,0 | | 546,0 | 546,0 | |
| 4267 | Կենցաղային և հանրային սննդի նյութեր | 4267 | 100,0 | 100,0 | | 110,0 | 110,0 | | 58,8 | 58,8 | |
| 4268 | -Հատուկ նպատակային այլ նյութեր | 4269 | 100,0 | 100,0 | | 400,0 | 400,0 | | 400,0 | 400,0 | |
| 4600 | *1.6 ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՆՊԱՍՏՆԵՐ ԵՎ ԿԵՆՍԱԹՈՇԱԿՆԵՐ, այդ* | x | 320,0 | 320,0 | | 495,0 | 495,0 | | 495,0 | 495,0 | |
| 4630 | *ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅԱՆ ԴՐԱՄԱԿԱՆ ԱՐՏԱՀԱՅՏՈՒԹՅԱՄԲ* | x | 320,0 | 320,0 | | 495,0 | 495,0 | | 495,0 | 495,0 | |
| 4633 | Այլ ընթացիկ դրամաշնորհներ այդ թվում | 4639 | | | | | | | | | |
| 4634 | -Այլ նպաստներ բյուջեից | 4729 | 320,0 | 320,0 | | 495,0 | 495,0 | | 495,0 | 495,0 | |
| 4700 | *1.7 ԱՅԼ ԾԱԽՍԵՐ, այդ* | x | 1046,1 | 1046,1 | | 141,1 | 141,1 | | 96,1 | 96,1 | |
| 4710 | Նվիրատվություններ ոչ | x | 30,0 | 30,0 | | 20 | 20 | | | | |
| 4712 | -Նվիրատվություններ այլ շահույթ չհետապնդող | 4819 | 30,0 | 30,0 | | 20 | 20 | | | | |
| 4720 | *ՀԱՐԿԵՐ, ՊԱՐՏԱԴԻՐ ՎՃԱՐՆԵՐ ԵՎ ՏՈՒՅԺԵՐ, ՈՐՈՆՔ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ* | | 91,1 | 91,1 | | 121,1 | 121,1 | | 96,1 | 96,1 | |
| 4721 | -Աշխատավարձի ֆոնդ | 4821 | | | | | | | | | |
| 4722 | -Այլ հարկեր | 4822 | | | | | | | | | |
| 4723 | -Պարտադիր վճարներ | 4823 | 91,1 | 91,1 | | 121,1 | 121,1 | | 96,1 | 96,1 | |
| 4761 | -Այլ ծախսեր | 4861 | | | | | | | | | |
| 4770 | *ՊԱՀՈՒՍՏԱՅԻՆ ՄԻՋՈՑՆԵՐ, որից՝* | x | 925,0 | 925,0 | | | | | | | |
| 4771 | -Պահուստային միջոցներ, | 4891 | 925,0 | 925,0 | | | | | | | |
| 4772 | համայնքի բյուջեի վարչական մասի պահուստային ֆոնդից | x | | | | | | | | | |
| 5000 | Բ. ՈՉ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱԿՏԻՎՆԵՐԻ ԳԾՈՎ | x | 7977,86 | | 7977,86 | 7977,86 | | 7977,86 | 4733,44 | | 4733,44 |
| 5100 | 1.1. ՀԻՄՆԱԿԱՆ | x | | | | | | | | | |
| 5110 | *ՇԵՆՔԵՐ ԵՎ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ, որից՝* | x | 7477,86 | | 7478,86 | 7017,86 | | 7017,86 | 3775,64 | | 3775,64 |
| 5112 | - Շենքերի և շինությունների կառուցում | 5112 | 250,0 | | 250,0 | 2740,0 | | 2740,0 | 1184,0 | | 1184,0 |
| 5113 | - Շենքերի և շինությունների կապիտալ վերանորոգում | 5113 | 7227,9 | | 7227,9 | | | 4277,9 | 2591,64 | | 2591,64 |
| 5120 | *ՄԵՔԵՆԱՆԵՐ ԵՎ ՍԱՐՔԱՎՈՐՈՒՄՆԵՐ, որից՝* | x | 500,0 | | 500,0 | 960 | | 960,0 | 957,8 | | 957,8 |
| 5121 | - Տրանսպորտային | 5121 | 300,0 | | 300,0 | 538,0 | | 538,0 | 537,8 | | 537,8 |
| 5122 | - Վարչական սարքավորումներ | 5122 | 200,0 | | 200,0 | 422,0 | | 422,0 | 420,0 | | 420,0 |
| 5123 | - Այլ մեքենաներ և | 5129 | | | | | | | | | |
| 5130 | *ԱՅԼ ՀԻՄՆԱԿԱՆ* | x | | | | | | | | | |
| 5134 | Նախագծահետազոտական | 5134 | | | | | | | | | |
| 6000 | Գ. ՈՉ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱԿՏԻՎՆԵՐԻ ԻՐԱՑՈՒՄԻՑ | x | -2000,0 | | -2000,0 | | | | -747,091 | | -747,091 |
| 6130 | *ԱՅԼ ՀԻՄՆԱԿԱՆ* | 8131 | | | | | | | | | |
| 6400 | ՉԱՐՏԱԴՐՎԱԾ ԱԿՏԻՎՆԵՐԻ ԻՐԱՑՈՒՄԻՑ | x | -2000,0 | | -2000,0 | | | | -747,091 | | -747,091 |
| 6410 | *ՀՈՂԻ ԻՐԱՑՈՒՄԻՑ ՄՈՒՏՔԵՐ* | 8411 | -2000,0 | | -2000,0 | | | | -747,091 | | -747,091 |

| Տողի NN | Բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման հոդվածների անվանումները | NN | Ընդամենը (ս.5+ս.6) | այդ թվում՝ | | Ընդամենը | այդ թվում՝ | | Ընդամենը | այդ թվում՝ | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | վարչական մաս | ֆոնդային մաս | | վարչական մաս | ֆոնդային մաս | | վարչական մաս | ֆոնդային մաս |
| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 | | 8 | 9 | 10 | 11 | 12 |

Հաշվետվություն

ՀԱՄԱՅՆՔԻ ԲՅՈՒՋԵԻ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՏԱՐԵՎԵՐՋԻ ՀԱՎԵԼՈՒՐԴԸ ԿԱՄ ԴԵՖԻՑԻՏԸ (ՊԱԿԱՍՈՒՐԴԸ)

| | | Տարեկան հաստատված պլան | | | Տարեկան ճշտված պլան | | | Փաստացի | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| Տողի NN | | Ընդամենը (ս.4+ս.5) | այդ թվում՝ վարչական մաս | այդ թվում՝ ֆոնդային մաս | Ընդամենը | այդ թվում՝ վարչական մաս | այդ թվում՝ ֆոնդային մաս | Ընդամենը | այդ թվում՝ վարչական մաս | այդ թվում՝ ֆոնդային մաս |
| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 | 7 | 8 | 9 | 10 | 11 |
| 8000 | ՀԱՎԵԼՈՒՐԴԸ ԿԱՄ ԴԵՖԻՑԻՏԸ (ՊԱԿԱՍՈՒՐԴԸ) | -7977,9 | | -7977,9 | -7977,9 | | -7977,9 | -3790,09 | 196,25 | -3986,35 |

Հաշվետվություն

ՀԱՄԱՅՆՔԻ ԲՅՈՒՋԵԻ ՀԱՎԵԼՈՒՐԴԻ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՄ ԴԵՖԻՑԻՏԻ (ՊԱԿԱՍՈՒՐԴԻ) ՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՆ ԱՂԲՅՈՒՐՆԵՐԸ

| | | | Տարեկան հաստատված պլան | | | Տարեկան ճշտված պլան | | | Փաստացի | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| Տողի NN | Բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման հոդվածների անվանումները | NN | Ընդամենը (ս.5+ս.6) | այդ թվում՝ վարչական մաս | այդ թվում՝ ֆոնդային մաս | Ընդամենը | այդ թվում՝ վարչական մաս | այդ թվում՝ ֆոնդային մաս | Ընդամենը | այդ թվում՝ վարչական մաս | այդ թվում՝ ֆոնդային մաս |
| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 | | | | | | |
| 8010 | ԸՆԴԱՄԵՆԸ, այդ թվում՝ | | | | | | | | | | |
| 8100 | Ա. ՆԵՐՔԻՆ ԱՂԲՅՈՒՐՆԵՐ, այդ թվում՝ | | 7977,86 | | 7977,86 | | | 7977,9 | | 196,25 | 3986.35 |
| 8110 | *1. ՓՈԽԱՌՈՒ ՄԻՋՈՑՆԵՐ, այդ* | | | | | | | | | | |
| 8111 | 1.1. Արժեթղթեր (թողարկում | | | | | | | | | | |
| 8120 | 1.2. Վարկեր և փոխատվություններ (ստացում և | | | | | | | | | | |
| 8121 | 1.2.1. Վարկեր, որը՝ | | | | | | | | | | |
| 8124 | *այլ աղբյուրներից* | | | | | | | | | | |
| 8131 | *ՀՀ պետական* | | | | | | | | | | |
| 8141 | *բյուջետային* | | | | | | | | | | |
| 8160 | *2. ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱԿՏԻՎՆԵՐ, այդ թվում՝* | | | | | | | | | | |
| 8190 | 2.3. Համայնքի բյուջեի միջոցների տարեսկզբի ազատ մնացորդը, այդ թվում՝ | | 7977,86 | | 7977,86 | | | 7977,86 | | | 7977,86 |
| 8194 | *2.3.2. Համայնքի բյուջեի ֆոնդային մասի միջոցների տարեսկզբի մնացորդը, որից՝* | | | | | | | | | | |
| 8195 | *- առանց վարչական մասի միջոցների* | | | | | | | | | | |
| 8197 | 2.4. Համայնքի բյուջեի ֆոնդային մասի | | | | | | | | | | |
| 8199 | 2.6. Համայնքի բյուջեի հաշվում միջոցների մնացորդները հաշվետու ժամանակահատվածում, որից՝ | | | | | | | | | | |